



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 11 » հունիսի 2024թ.

ՆՄՈ/250-Ա

ք. Արմավիր

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ
ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2023
ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 18-Ի ՆՄՈ/363-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒՅԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետով հաստատված N4 հավելվածի պահանջները՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների տրամադրման գործընթացում միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հավանության արժանացած ծրագրերի իրականացման, հսկողության, մշտադիտարկման և ավարտի փաստագրման նպատակով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

- Ստեղծել մշտադիտարկման նոր աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
- Աշխատանքային խմբի ղեկավարին (Խաչատուր Մկրտչյանին)՝ ապահովել ոլորտային մասնագետներից բաղկացած մշտադիտարկման աշխատանքային խմբի կողմից սուբվենցիայի ծրագրերով կատարվող աշխատանքների ընթացքի, որակի համապատասխանության ուսումնասիրության այցելությունների իրականացումը՝ ամիսը 2 անգամ յուրաքանչյուր ծրագրի համար, ինչպես նաև ծրագրի ավարտից հետո

շահագործման հանձնված օբյեկտների, ձեռք բերված մեքենասարքավորումների, տեխնիկայի ու գույքի կիրառման ու օգտագործման մշտադիտարկման մասով այցելությունների իրականացումը՝ ծրագրի ավարտից հետո առաջին տարվա ընթացքում՝ տարին մեկ անգամ, այնուհետև՝ ըստ անհրաժեշտության, և կատարված աշխատանքների մասին պարբերաբար տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2023 թվականի օգոստոսի 18-ի «Մշտադիտարկման աշխատանքային խումբ ստեղծելու մասին» ՆՄՈ/363-Ա որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝



Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

ԿԱԶՄ
ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Աշխատանքային խմբի ղեկավար՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ՝

Խաչատուր Մկրտչյան

Աշխատանքային խմբի անդամներ՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և
ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի
պահպանության վարչության պետ՝

Արթուր Այվազյան

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
աշխատակազմի ֆինանսական վարչության պետ՝

Վարազդատ Մկրտչյան

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական
հաշվառման բաժնի պետ՝

Արայիկ Հակոբյան

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
Աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և
իրականացման բաժնի պետ՝

Լիլիթ Մուշեղյան

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
քաղաքաշինության, հողաշինության և
ենթակառուցվածքների կառավարման վարչության
գլխավոր ինժեներ՝

Համլետ Կուրդինյան

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
քաղաքաշինության, հողաշինության և
ենթակառուցվածքների կառավարման վարչության
ավագ ճարտարագետ՝

Դավիթ Ավետիսյան

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
քաղաքաշինության, հողաշինության և
ենթակառուցվածքների կառավարման վարչության
գլխավոր ճարտարագետ-շինարար՝

Ռաֆիկ Երվանդյան

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
քաղաքաշինության, հողաշինության և
ենթակառուցվածքների կառավարման
վարչության գլխավոր ինժեներ՝

Խորեն Սարուխանյան

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
գարգացման ծրագրերի մշակման և
իրականացման բաժնի ավագ մասնագետ՝

Հերմինե Հովհաննիսյան:

Գլխավոր քարտուղար՝

Ա. Հովհաննիսյան

